

FRANCIS RICHARD, *Raphael du Mans missionnaire en Perse au XVII^e s. I, Biographie. Correspondance. 318 pp.; II Etats et Mémoire, 403 pp.*, Paris: Société d'Histoire de l'Orient, Edition L'Harmattan, 1995 (Moyen Orient & Océan Indien XVI^e—XIX^e s., t. 9).

1995 թ. Փարիզում, որպես *Moyen Orient & Ocean Indien XVI^e—XIX^e s. մատենաշարի* 9-րդ գիրք, լույս տեսավ հայտնի ֆրանսիացի արևելագետ Ֆրանսիս Ռիչարդի «Ռաֆայել դյու Ման» XVII դարի միսիոներ Պարսկաստանում և Երկհատուր աշխատությունը, որը պարունակում է շատ կարևոր տեղեկություններ ինչպես արևելագիտության, այնպես էլ հայագիտության համար:

Աշխատության առաջին հատորում (սկսնաագրություն. Բղթակցություն) Ֆ. Ռիչարդը մանրամասն ուսումնասիրել է Ռաֆայել դյու Մանի Պարսկաստանում անցկացրած տարիները, կենսագրական բնույթի բաղադրված հարցեր, հրատարակել է նրա ողջ էպիստոլյար ժառանգությունը և կատարել է լուրջ հետազոտություն՝ պարզելու համար դյու Մանի աշխատանքների աղբյուրաղիտական հենքը, վերլուծվել և ցույց են տրվել XVII դարի այն եվրոպական ուղեգիրները, ովքեր այս կամ այն չափով զգտվել ու աղղվել են դյու Մանի աշխատանքներին:

Ժակ Դյուտերտրը (պատմագրության մեջ հայտնի որպես Հ. Ռաֆայել դյու Ման) ծնվել է 1613 թ. ֆրանսիական Մանս քաղաքում: Ոչինչ հայտնի չէ նրա ստացած սկզբնական կրթության մասին, ինչպես նաև թե ինչպես է նա մտել Մանսում 1602 թ. հիմնադրված վեղարավորների (կապուցիների) վանքը: Ըստ Ֆ. Ռիչարդի, նա պետք է որ ուսման նպատակով ապրելիս եղած լիներ նաև Փարիզում, որտեղ և ձևավորվել էր նրա անբարյացկամ վերաբերմունքը հիսուսյանների (ճիզվիտների) նկատմամբ: Ռաֆայել դյու Մանը ֆրանցիսկյանների մի ճյուղը՝ Նանդիսացի ու մեծ հարգանք վայելող վեղարավորների (կապուցիների) օրդեն մտավ 22 տարեկան հասակում: Այս օրդենի հոգևորականները հիմնավոր պատրաստություն ունեին աստվածաբանության և փիլիսոփայության 7-ամյա ուսումնասիրման շնորհիվ, այստեղ հատկապես կարևորվում էին նաև բնագիտական իմացությունները: Ուստի պատահական չէր, որ ինչպես Հ. Ռաֆայելը, այնպես էլ նրա միսիո-

ներ գործակիցները բաղադրվածների զարգացած մարդիկ էին:

Մանսի գավառը, սկսած 1626 թ. Հ. Պացիֆիկ դե Պրովինսի (1588—1648) ճնշման տակ որգեզրեց դեպի Արևելք վեղարավորների միսիոների առաքումը: Մի կողմից վեղարավորները նպատակ ունեին իրագործել Հռոմի Նևտ Արևելքի քրիստոնյա եկեղեցիների միությունը և մյուս կողմից, հոգևոր կյանքի և ուսման միջոցով թույլ չտալ իսլամական երկրներում բնակվող քրիստոնեական փոքրամասնությունների անհետանալը:

Ոչ մի ուղղակի վկայություն չկա Ռաֆայել դյու Մանի Պարսկաստան անցնելու թվականի, կամ անցած ուղու վերաբերյալ: Ըստ Ֆ. Ռիչարդի ենթադրության, նա մեկնել է 1645 թ. վերջին կամ 1646 թ. սկզբին: Նախ եղել է Նդիպոսում և մնացել տեղի վեղարավորների մոտ: Դատելով իր իսկ գրվածքների թվականներից, նա Պարսկաստան հասավ 1647 թ. և այնտեղ ապրեց մինչև իր կյանքի վերջը՝ 1694 թ.: Պարսկաստանում, շնորհիվ իր դիտելիքների ու էթնոգրիայի, օժտված լինելով հզոր խառնվածքով ու լեզուների իմացությամբ, նա կարողացավ երկարատև գործունեության ասպարեզ ապահովել իր համար: Ղեկավարելով դեռևս 1628 թ. Հ. Պացիֆիկի կողմից հիմնված Սպահանի միսիան, նրան հաջողվեց նույնիսկ դառնալ պարսից շահերի անձնական թարգմանը և որպես այդպիսին մասնակցեց համարյա բոլոր եվրոպական դեսպանությունների կամ անհատ անձանց հետ շահերի բանակցություններին ու զրույցներին: Սկզբում նա վայելում էր շահ Արաս 11-ի, այնուհետև՝ շահ Աուլիյ-մանի հարգանքով: Եկեղեցիների միության և Արևելքում քրիստոնյաների պաշտպանության խնդրով Պարսկաստան մեկնած այս հոգևորականը շուտով դարձավ ոչ միայն Պարսկաստանում, այլև ողջ Արևելքում Կոլերի ծրագրերի իրականացնող ղեկավար անձը, որին հաջողվեց իր ձեռքում կենտրոնացնել այդ քաղաքականություն իրագործելու բոլոր թելերը:

Թե ինչպես էր դուր Լճանը կատարում իր խնդիրը, կարելի է դատել թեկուզ հենց եվրոպական պետությունների կողմից Պարսկաստանին հակաթուրքական լիզայի մեջ ներքաշելու փորձերի վերաբերյալ փաստերից: Վեղաբաժնի հոգևորականը, որի ձեռքի առկով անցնում էին եվրոպական միապետների բոլոր նամակները, այդ փորձերի ակամա վկան էր: Կեմալիսին ուղղած իր բազում նամակներում և հատկապես 1634 թ. հունիսի 30-ի նամակում, նա շեշտում էր, որ իդուր են բրիտանյա տերությունների և հատկապես Անգլիայի ֆաները հակաթուրքական կռիվների մեջ Պարսկաստանի դեմ ժամանակցությունը շահագրգռելու գործում: Գեռես Սերաստիան Կեմալիսին 1634-1639 թթ. նախնականի հայ կաթոլիկների առաջնորդը, իր նամակներում նկատելի էր հ. Ռաֆայելի կանխակալ վերաբերմունքը հակաթուրքական լիզայի ստեղծման նկատմամբ: Վեղաբաժնի որդի ուժով աշխատում էր այդ ծրագրի դեմ, բանի որ այն կվնասեր իր երկրի՝ Ֆրանսիայի շահերին: Ըստ Ս. Կրեմարի, դուր Լճանը անմիջական սերտ կապերի մեջ էր պարսից արքունիքի բարձրաստիճանի պետական պաշտոնյաների և թագավորական բարձրագույնի հետ, որոնք օսմանյան լրտեսներ էին պարսից արքունիքում: Ֆ. Ռեշարը ընդունում է, որ զուցե Կեմալիս վերաբերմունքը ծայրահեղ է, բայց ինչ վերաբերում է հ. Ռաֆայելին, իրոր հայտնի է, որ վերջինս 1636 թ. Պոսի ֆրանսիական ղեկավարին պեկուցել է հետաքննության հակառակ ստեղծելու նպատակով Սպահան եկած ղեկավարությունների մասին (տե՛ս հ. 1, փաստաթուղթ 33): Ուշագրավ է, որ ղեկավարն իրավունք ուներ այս մասին տեղեկացնել նաև թուրքերին: Վեղաբաժնի արքունիքում ունեցած իր փորձով դիտելով, որ Պարսկաստանի մասնակցությունը լիզա ստեղծելու փորձը իրականանալու ոչ մի գործնական հավանականություն չունի: Ըստ Ֆ. Ռեշարի, նրա լուրջությունը բացատրելի է որքան նրա պոլիտիկական, նույնքան էլ ևուրդովիկոս XIV-ին ծառայելու հրա գտնվությամբ:

Սպահանում հ. Ռաֆայելի գործունեության բացահայտմանը դուրա՛նե Ֆ. Ռեշարը մանրամասնորեն քննարկում է Սպահանի և նրա արվարձանների բնակչության լիքնակական և զավանական կառուցվածքը՝ գետնիցով նաև Սպահանի և արվարձանների բրիտանյա բռնակցության (հայեր, ասորիներ, վրացիներ, հայերիկյաններ և այլն, ինչպես նաև զերբեր) լիքնակական բարոսիկը: Գրքում մանրամասնորեն լուսարանվում է շահ Արամ I-ի կողմից հայերի բռնազավթից հետո նոր Զուղա բա-

զաքի ու նրա թաղերի ձևավորումը ըստ բրնազավթված բնակավայրերի:

Ֆ. Ռեշարը, խոսելով Սպահանում եվրոպական միսիաների (կապուցիկների, կարմելիտների, ֆրանցիսկյանների, իսուսյանների և այլն) աստատման մասին, անդրադառնում է նաև հայ բնակչության մեջ էթնոզավանական գործընթացներին, մասնավորապես Փերիայի, Ռուրվարի գաղտնի հայկական գյուղերի իսլամացման և կաթոլիկացման փորձերին: 1621 թ. օգոստոսին շահ Կայսերի շեյխ Ամելիի ղեկգամար որոշեց պարտադրել Փերիայի բոլոր հայերին (Սպահանի (հսկանգարի), Ռուրվարի և Փարշուս գավառներից) իսլամ ընդունելու: Շատ բողոքներից հետո հայերը հասան այն բանին, որ շարունակեն աղատորեն հետևել իրենց կրոնին և Սպահանի կարմելիտները քիչ անց եկան իրենց միսիան իմենելու: Վաղերադարձն հայտնի է, որ Փերիայում կար 44 գյուղ, կենտրոնական Շահ Բուլակ-Լ-Արամեն բնակավայրով: Անթաղիում է, որ այս գավառում էր գտնվում նաև Շուրիսկան (Սուրիշկան) գյուղը՝ Կարանից 20 կմ արևմուտք, որը բոս հ. Սեն Ժոզեֆի, ուխտավայր էր ինչպես բրիտանյանների, այնպես էլ մահմեդականների համար՝ Կիարմիլ ավետարանի շնորհիվ, որը բերվել էր Աղթամարից և պահվում էր գյուղի եկեղեցում: Ի դեպ, պարսիկ հեղինակները ևս պատմում են այս իրադարձությունների մասին: Ըստ նրանց (տե՛ս օրինակ՝ Իսկանդեր բեկ Մունշի) այս բրիտանյանների մի խումբ Ֆարիզունի և Բախաթարի տարածքում, ուր նրանք պաղվում էին երկրագործությամբ, իսլամն ընդունելու՝ ռադիկալ հրավերա ստացավ: Իրենց ծանր կյանքի պատճառով նրանցից ոմանք եթարկվեցին շահի հրամանին: Վե՛ճ առաջացավ եկեղեցին մզկիթի վերածելու շուրջ: Հայ հոգևորականները ճնշում գործադրեցին որոշ հայերի վրա նրանց արգելելով իսլամանալու: Հավատափոխներից «հանեցին» ավետարանը և նրանց ուսուցիչներ տվեցին Ղուրանը ուսուցանելու համար:

Հարկ է նկատել, որ Ռուրվարի գաղտնի ուներ հայ կաթոլիկաններով բնակեցված բազում գյուղեր: 1746 թ. մի վիճակագրությանը գեռես 4 պաշտ բնակեցված էին հայերով: 21 գյուղ եկեղեցիներով՝ Փերիայում, 17՝ Ռուրվարիում, 12՝ Գանդոմանում և 9՝ Լանջանում (մի մասն ավերված) (վիճակագրական տեղեկությունները բերվում են ըստ A Chronicle of the Carmelites in Persia, London, 1939, vol. I, p. 644): Ֆ. Ռեշարը այս թվերը համեմատում է մոնսիյոր Պալլուի կողմից Հավատափոխության ժողովի (Պրոպագանդա Ֆիդել) պրեֆեկտ կարգի-

նալին ուղղված 1662 թ. սեպտեմբերի 19-ի ղեկուցագրում մանրամասն տրված Սպահանի բրիտանյանների թվերի նկատմամբ ձևակերպված է, որ Սպահանում կան երկու կաթոլիկ ընտանիք, նաև ապրում են անգլիացիներ, հոլանդացիներ և միսիոներ հոգևորականներ, Մնացած բոլոր բրիտանյանները շահի հրամանով ստիպված եղան լքել բազալը, Դրա փոխարեն իրար կողքի գտնվող շորս մեծ արվարձանները՝ Զուդան, Երեանը, Շեխշերանը և Փարարադը՝ բնակեցված են 1/3-ը համարյա միայն հայերով և վերջինը՝ գերբերով, Ըստ Պալլուի Զուդայում 8000 մարդ է ապրում, Երեան արվարձանում՝ 4000, Շեխշերանում՝ 2000, Հայ արքեպիսկոպոսը մի փոխանորդի հետ կառավարում է այս երեք բազալները, Իր ենթակայության տակ նա ունի 8 հոգևորական, 80 բահան և միանձնուհիների մի վանք, Զուդայում կան մի քանի ֆրանկներ, որոնք ֆրանսիացիներ են, Պալլուն միայն վեց հայ կաթոլիկ ընտանիք է հանաչում:

Քաղաքից դուրս կա երկու հայկական գյուղ՝ Զուդային մոտ՝ „Gwendonar“ և Զախոն՝ „Glacogor“: Ի վերջո, Փերիայի լեռներում, մայրաքաղաքից 4—5 օր հեռավորության վրա, կան ավելի քան 80 հայկական գյուղեր՝ մի նպիսկոպոսով, 3—4 ճգնավորով և ավելի քան 50 բահաններով: Սա մի երկրամաս է, որ տարվա 6 ամիսը ձյուն է և ուր կյանքը դժվար է և միսիոներներին լավ են ընդունում: Այնտեղ տանող ճանապարհի վրա կարելի է գրտնել ևս երկու հայկական գյուղ, որոնց բնակիչների մեծ մասը նախնիների հայ կաթոլիկ արքեպիսկոպոսության գաղթեցվածներ են, բայց բահանայի բացակայության պատճառով և այդուհանդերձ դալ-գնալու պատճառով միայն 12 ընտանիք են կաթոլիկ մնացել:

Պարսկաստանում հ. Ռաֆայելի գործունեությունը ուներ հոգևոր-գաղական, քաղաքական և կազմակերպական ուղղություններ: Շատ եվրոպացիների ուսումնասիրությունն և ուսումնասիրության մասին տեղեկությունները և պարսիկ հասարակության նկարագրությունները վերցված են հ. Ռաֆայելի մեզ հասած կամ մեզ անծանոթ գործերից: Հայտնի է, որ վերջինս հաճախ էր տալիս իր ուսումնասիրությունները եվրոպացի հյուրերին (դը Լալեն, Քեննո, Տավերնիե, Շարդեն...), որպեսզի ներանք դրանց միջոցով ծանոթանան պարսից իրականությանը և իրենց հերթին՝ ծանոթացնեն եվրոպային: Ֆրենսիս Ռիչարդի կատարած աղբյուրագրության խոր ուսումնասիրությունը չի ունի ապացուցում է այս դրույթը: Ավելորդ չենք համարում ստորև նշել եվրոպացի այն

ճանապարհորդ-նկղինակներին, որոնց գործերը պատմագրության մեջ համարվում են ստույգ, արժանահավատ, նկղինակներ՝ որոնք օգտվել են Ռաֆայելի գյու Մանի գործերից:

Ժան Բենեո. 1664 թ. Սպահան այցելած Ժ. Քեննոյին Ռաֆայելի գյու Մանը անկասկած ցույց է տվել իր «Պարսկաստանի պատմություն» աշխատությունը և ծանոթացրել նրան մայրաքաղաքի անցուղարձին, Շատ կետերում Բենեոյի թողած պատմությունը (Suite du Voyage de Levant... de Jean Thevenot, Paris, 1674) աղեկություն է կրել գյու Մանի գրառումներից, Դրանք հատկապես այն մասերն են, ուր Քեննոն նկարագրում է պարսկական պետական կառուցվածքները, կրոնը, մայրաքաղաքը, տների կառուցվածքը, արհեստները:

Ժան Բատիստ Տավերնիե. Հաստատվում են Տավերնիեի Պարսկաստանի նկարագրության (Les six Voyages de M. Jean-Baptiste Tavernier..., Rouen, 6 vol., 1724) և հ. Ռաֆայելի „L'Etat de 1660“-ի միջև որոշակի նմանությունները: Օրինակ, Պարսկաստանի նկարագրության 6-րդ գլուխը բացող մասը կարող է արտագրված լինել հ. Ռաֆայելի այս մեմուարից, կամ նրան նմանակող մի այլ աշխատությունից: Ավելին, «6 ճամփորդությունների» 5-րդ գլխի և հ. Ռաֆայելի 1655 թ. վերագրված «Պարսկաստանի կացության մասին» ձեռագրի, 1674—1676 թթ. Pétis-ի կողմից արտագրված մասի միջև շատ մեծ նմանություն կա: Ոչ միայն բառերի ու պարսկական անունների տառադարձումն է միևնույնը, այլև ամբողջական նախադասություններ են կրկնվում: Հիմք կա մտածելու, որ հ. Ռաֆայելը 1667 թ. մի արտագրություն է հանձնել Տավերնիեին, կամ նրան տվել է արտագրելու իր «Պարսկաստանի պատմություն»-ից, որ ավելի ամբողջական է եղել: Տավերնիեի մոտ Մուհամեդ բեգի մասին հատվածը ևս պետք է վերցված լինի Ռաֆայելի գյու Մանից: Դիտարկելով Տավերնիեի «Հայոց հավատք» գլխի բնագիրը, Ֆ. Ռիչարդը գտնում է, որ ընդհանրապես անհնար է այն վերագրել մեկ հնդինակի, որը չի ներ Պարսկաստանում երկար ապրած և լավատեսլակ միսիոներ իսկ այդպիսին կարող էր լինել միսիոներների միջից միայն Ռաֆայելի գյու Մանը:

Պետրոս Պետիկ. Սրա մոտ չի երևում, որ իր տեղեկությունների համար պարտական է հ. Ռաֆայելին, որին նա մեծ գովք է անում, ասելով. «Այս մարդը, որ 32 տարի է Սպահանում է, ճանաչված է մեծերի կողմից, Լեռնալները նրան մատով են ցույց տալիս հրապարակում, որովհետև նա խիստ մոլեկալ ու

աստվածասեր կյանքի հայելին է: Պետրոս Պետիկը իր „Cehil Sultun... Vienne, 1678“ հոնրահայտ աշխատության մեջ հրապարակում է հ. Ռաֆայելի նամակը, որն իր ձևերն անցնելուց հետո այնքան խնամքով պահել էր:

Շարդեն. „La description générale de la Perse“ -ն բաղաժողով կետերում, նույնիսկ իր շարադրանքի հերթականությամբ հիշեցնում է հ. Ռաֆայելի „De Persia“-ն: Մուսլիմանի թագադրությունը նվիրված դիսի որոշ մանրամասներ ցույց են տալիս, որ նա ծանոթ էր վեղադրողի ակնարկներին: Շարդենը պատմում է, որ երբ հյուրընկալվում էր վեղադրողների մենաստանում, հ. Ռաֆայելը նրան ծանոթացրել է շատ պարսիկ գիտնականների հետ: Չնայած դրան, ուշադրով է, որ Շարդենի դեհադանները, արժեքավորումները շատ տարբեր են հ. Ռաֆայելի տեսակետներից: Շարդենն իր խոսքը համեմատում է հարուստ գիտարկումներով և դատողություններով, որոնք հատուկ չեն վեղադրողին: Շարդենն իր աշխատությունը հրատարակեց 1686 թ.՝ վերջնականապես ընդունելով ուղիղմանական դադարները: Շիա Պարսկաստանը նա նկարագրում է կրոնական ազատությունների տեսակետից, որն անծանոթ էր կաթոլիկ Ֆրանսիային և որն էլ նրա աշխատությանը հատուկ արժեք է տալիս: Չնայած դա նվազ որոշակիություն էր կրում, բան Տավերնիեն մոտ, ընդունելի է, որ Շարդենը, անկախ ամեն ինչից, պարտական է հ. Ռաֆայելի աշխատանքներին: Իրավամբ Ֆ. Ռիշարը գտնում է, որ նրանց աշխատությունների համեմատական ընդունումը մի հարուստ աշխատատեղության նյութ կարող էր լինել: Ուշադրով է, որ իր ձևավոր տեսքում Շարդենը, կաթոլիկ միսիաների մասին այլ դատողություններ է անում, քան հետագայում իր աշխատության հրատարակության մեջ: Իր նախորդների աշխատանքների մասին Շարդենը գրում է. «նա կարողացել է, թե ինչ էն գրում Տավերնիեն և Թեննոն իրենց ուսումնասիրություններում: Են շատ ճիշտ է գտնում նրանց գրածը, որ երկուսի մոտ էլ միևնույն է: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ երկուսն էլ իրենց մեծուարները վերցրել են նույն աղբյուրից՝ վեղադրողի Ռաֆայելի գյուլանից, որին արդեն 40 տարի է Սպահանից անցնող բոլոր ազգերի հետաքրքրասեր ճամփորդները պարտական են այն ամենով, ինչ ամենաարժեքավորն է իրենց գրվածքներում»:

Ֆրանսուա Պետի դը լա Կրուա. Ֆրանսուա Պետի դը լա Կրուան Ժան Թեննոյի ընկերոջ որդին էր: Նրա հայրը թագավորի արարներն և թուրքերն լեզուների թարգմանիչ-բարտեղարն

էր, իսկ նրա եղբայրը մինչև 1715 թ. Փարիզի Սեն Ժերմեն դը Պրե բենեդիկտյան տաճարային շրջանի գրադարանավարն էր: Կուրերը Երեսնամյա պատերազմի ժամանակ զինվորներ էին: Կուրերը շարունակելու նպատակով, նա հ. Ռաֆայելին էր բերում Կուրերի 28. 5. 1673 թ. նամակը: Սկզբնական շրջանում մնալով Ռաֆայելի գյուլ Մանի մոտ, նրանից է ստանում պարսկերենի և Պարսկաստանի մասին իր առաջին ծանոթությունները: Նա իր աշխատությունը (Extrait du Journal du Sieur Fr. Péllis... 1694) գրելու ժամանակ լայնորեն օգտվել է Ռաֆայելի գյուլ Մանի օժանդակությունից:

Ջոն Ֆրայեր. 1677 թ. Սպահան է գալիս Ջոն Ֆրայերը, որպես Հնդկաստանի անգլիական բնակչության բժիշկ: Մնալով այստեղ մոտ 5 շաբաթ, իր 5-րդ նամակում նա անդրադառնում է տեղի լատին հոգևորականներին: Են պիտի խոստովանեմ, որ նրանցից ոմանք ոչ միայն սուրբ մարդիկ են, այլ նաև շնորհքով և գիտուն, որպես գլխավոր ունենալով հ. Ռաֆայելին, մի վեղադրողի, որը նրանց հատուկ օրինակ է ծառայել տարիներ շարունակ և լավ ձևաչափ է այս երկրում: Են պետք է վկայեմ, որ նրանից էմ ստացել լավագույն և հեղինակավոր տեղեկություններ: Նրա աշխատության հրատարակության (A New Account of East-India and Persia..., London, 1688) մեջ կան գիտարկումներ, որոնք նա մասամբ վերցրել էր հ. Ռաֆայելի հետ ունեցած դրույցներից:

Էնգելբերտ Էնգելբերտ. Պարսկաստանի հետ առևտրական հարաբերություններ սկսելու նպատակով 1679, 1693 թթ. Սպահան ժամանած շվեդական դեսպանության բարտեղար էնգելբերտ Էնգելբերտը շատ արագ ձևով բերեց հ. Ռաֆայելի բարեկամությունը, որը նրան սովորեցնում էր պարսկերենի և ծանոթացնում երկրին: Նրան և Պրիստաֆին է հ. Ռաֆայելը հանձնել 1684 թ. իր „De Persia“-ի լատինական օրինակը, որը ներկայումս պահվում է Բրիտանական գրադարանում: Էնգելբերտի աշխատության (Engelbert Kœmpfer. Amœnitatum exoticarum..., Lemgoviae, 1712) հիմնական աղբյուր է հանդիսացել Ռաֆայելի գյուլ Մանի „De Persia“-ն, հատկապես՝ իսլամի, պարսկական տոների, դասավանդման և գիտությունների, բանակի և պետական որոշ կառույցների մասին հատվածներում: Կան ուղղակի ասացվածքներ, անկողնուներ (պատմություններ), որոնք բառացիորեն են վերցված: Սակայն է. Էնգելբերտը ամեն ինչ չէ, որ օգտագործել է, նա օգտվել է այլ աղբյուրներից:

ևս, հաճախ հ. Ռաֆայելի տեղեկությունները հշգրտված են և լրացված: Իսկ Պարսկաստանի մասին իր ընկալումը շատ ավելի բացասական է բան Հ. Ռաֆայելինը „De Persia“-ի մեջ:

Աղբյուրագիտական այս էքսկուրսը վկայում է, որ, վերաբարվոր Ռաֆայել գյու Մանը, անկասկած մեծ ազդեցություն է ունեցել Սպահան այցելած բոլոր ևվրոպացիների վրա: Ֆ. Ռիշարի հավաստմամբ՝ «նա ֆրանսիական իրանագետների նախնին է համարվում իր օգտագործած գունագեղ և հումորով լեզվով՝ որպես «Ռիշարի գարաշչանի» մի մարդ»:

Ներկայացվող աշխատության առաջին հատորի երկրորդ բաժնում հրատարակված են հ. Ռաֆայելի 1659—1694 թթ. նամակներն ուղղված ժամանակի բաղաբական ու կրոնական գործիչներին՝ Պուլևին, Բարոնին, Սիլվեստր Սենտ-էնյանին, մի անհայտ կրոնավորի, Ֆերմանելին, Կուրերին, Գալիլին, Պետիկին, Կարդինալ Ալբերին, Շարդենին, Ռեդենին, հ. Ուրբանոս փարիզցուն, Կենպֆերին, Իվ դե Բուրբոն, հայ կաթոլիկ գործիչ Գրիգոր Մործորեցուն և այլոց:

* * *

Աշխատության երկրորդ հատորը ընդգրկում է Ռաֆայել գյու Մանի „Estats et Memoire“-ը, որ մտնում են 1660 թ. շարագրած „Estats de la Perse“, „Memoire sur les Jesuites“ գրված 1662 թ., վերաշարագրված „Estats de la Perse“ և 1684 թվականով թվագրված „De Persia“ գործերը: Ռաֆայել գյու Մանը իր հայտնի „Etat de la Perse“ աշխատությունը (որի ձևագիրը 1682—1683 թթ. միևնույն Կուրերի անձնական գրադարանում էր) սկսեց գրել 1660 թ.: Որ այս ձևագիրը, ըստ հրատարակչի, հրատարակության համար չէր նախատեսված, վկայում է այն հանգամանքը, որ այնտեղ բացակայում էր առաջարանը: Աշխատանքը, հավանաբար, գրվել էր սեփական նախաձեռնությամբ, կամ էլ գյու Մանի վերադասի պատվերով: Զեռագրի բովանդակությունը խիստ հազեցված է (կարծես հարցարան է լրացվել) Պարսկաստանի քաղաքականության, դավանանքի, գիտության, արվեստի և նույնիսկ ընդերքի մասին տեղեկություններով:

Գիտական բարձր մակարդակով վերահրատարակելով „Estats de la Perse“-ը Ֆ. Ռիշարը ուղղել և շտկել է Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվող ձևագիրը, որը և արևելագետ-բիրոսիլ Շ. Շեֆերի կողմից (տե՛ս P. Rapail du Mans, Etat de la Perse en 1667. Publie avec notes et appendice par Ch. Schefer. Paris, 1890) անցյալ դարի

վերջին հրատարակվել էր ոչ ճիշտ ընթերցումներով: Մանթագրություններում հիմնականում օգտագործվել է Գարրիել Շինոնի արժանահավատ „Relations nouvelles. Lyon, 1671“-ը, 1663 թ. „Estats de la Perse“-ը, ըստ էության, 1660 թ. նրա շարագրած տեղեկագրի մեկ այլ խմբագրությունն է, իսկ 1684 թ. „De Persia“-ն նույնի մեկ այլ խմբագրություն է լատիներեն լեզվով: Ռաֆայել գյու Մանի „Etat“-ն ամբողջովին տարբերվում է տեսական և առևտրական նպատակներով գրված այլ ղեկավարների „Memoire“-ներին: Նա, բարոյագետի իր սուր հայացքով, նկարագրում է շատ գունագեղ, յուրօրինակ և ամբողջական տեսարաններ՝ պարսկական հասարակության «թատրոնը»: Համեմատելիս, վերաբարվոր վանականը իր առաջ նպատակ էր գրել ճշգրտել իր բոլոր նախորդների (լա Բուլեյ լա Գուդի, Ալբեսանդր Հոգեսի, Ադամ Օլլիվերի, Օլևարիուսի և այլոց) հայեցակետերն հաղորդած տվյալները Պարսկաստանի մասին: Զպետը է մոռանալ, որ Սպահանի վերաբարվորների միսիան «ծնվեց» շահ Աբբաս I-ի դարաշրջանում, երբ Պարսկաստանը բացվեց Եվրոպայի առաջ, և Գուայի արքայակոպոս Alexio de Meneses-ի կողմից կազմակերպվեց միսիոներների ներթափանցումը դեպի Արևելք, որին նպաստեց նաև Հավատաստիյու ժողովի (Պրոպանդանդա Ֆիզկ) գործունեությամբ ողորկված Լուդովիկոս XIII-ի րազարականությունը: Սակայն կաթոլիկացման մասնադաշնության առաջին հույսերը ձգտ ցնդեցին, երբ Իրանի մասին առաջին ճշգրիտ վկայությունները սաացվեցին: Այս տեսակետից այն տեղեկությունները, որ Պարսկաստանի մասին հավաքեց հ. Ռաֆայելը, օրինակելի են: Նա հասկանում էր այն բոլոր արգելքները, որոնք խանդավորում են ժողովրդի կաթոլիկացմանը: Ֆ. Ռիշարը ընդունում է, որ Պարսկաստանի միսիայի արդյունքը բավական փոքր էր, և պարսկահայերի հուսացած միությունը Հոմի Սուրբ Պետրոսի գահի հետ չիրականացավ և դավանական անտառներով ավելի կարծրացավ (հ. Ռաֆայելի կյանքի վերջին տաս տարիները լի էին հայոց հետ րադում կոնֆլիկտներով): Այնուամենայնիվ, ըստ Ֆ. Ռիշարի, գյու Մանը, այլ լատին միսիոներների հետ միասին, կարողացավ եթե ոչ ապահովել հայոց քաղաքական անկախությունը, ապա նպաստել նրա մտավոր և հոգեվոր զարթոնքին, որն էլ սկիզբ դրեց «հայկական վերածննդին»:

Այլ էր գյու Մանի կողմից 1662 թ. շարագրված „Memoire sur les Jesuites“-ի պատմությունը, Եվրոպայում հիսուսյան ժան

Մաշտոցի կողմից 1659 թ. հրատարակվեց մի «Տեղեկագիր» („Relation“) ուր շափաղանցվում էր հիսուսյանների գործունեությունը Պարսկաստանում՝ հատկապես քրիստոնյաներին կաթոլիկացնելու վերաբերյալ։ Մա նպատակ ուներ տրամադրություն ստեղծել հիսուսյանների ընկերությունից դրամական միջոցներ ստանալու համար։ Այս և սրա նման այլ հրատարակություններ, հալ վաճառականների միջոցով ընկան պարսկահայերի ձեռքը և հակառակ ազդեցություն թողնելով՝ շարժում առաջացրին միսիոներներին դեմ։

Այս իրադարձությունները հ. Ռաֆայելը շարադրեց իր գրքում 1661 թ. «Դիտենք, որ այդ „Mén oïre“-ի ձեռագիրը հ. Ռաֆայելը ցույց է տվել Շարդենին՝ Դրան ծանոթ է եղել նաև Տավերնիեն։

Դ. Ռեշարի այս երկհատոր աշխատության մեջ ընդգրկված բոլոր նյութերը ծանոթագրված են գիտական մեծ իմացությամբ ու բարեխղճությամբ։ Մանրթարգման համար օգտագործված նյութը, բաղված եվրոպական, կարելի է ասել բոլոր խոշոր ձեռագրատներից (Վատիկանի, Պրուպանդա Ֆրեյի, Ռիտանական գրադարանի, Ֆրանսիայի Ազգային գրադարանի, Փարիզի Արտասամանյան միսիոներին և

այլ արխիվներից), վկայում է հեղինակի երկարատև փնտրտուքների մասին։ Եթե առաջին հատորում զետեղված նամակները հիմնականում լույս են սփռում դու Մանի քաղաքական ու դավանական գործունեության վրա, ապա երկրորդ հատորում ներկայացված „Es:ais et Mèn oïre“-ը հիմնականում Պարսկաստանում ապրած տարիների նրա ուսումնասիրություններն են։ Հատորը եզրափակում են անձնանունների և տեղանունների ցանկերը։ Հատորները հարստացված են ժամանակի դրավուրներով, նկարներով, բարտեզներով ու հատակադեքերով ու հարցի վերաբերյալ մատենագիտությամբ։

Մանրթանալով Ֆրենսիս Ռեշարի իրականացրած նորօրյա հրատարակությանը, կարելի է վստահորեն ասել, որ նա լիովին գերադանցել է իր նախորդների կատարած աշխատանքը, և դրեթև սպառիչ մակարդակի է հասցրել Ռաֆայել դու Մանի տպագիր և անտիպ աշխատանքների հրատարակությունն ու ուսումնասիրությունը։

ԹԱՋԻՐՅԱՆ Է. Խ.
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ. Կ.